

ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի 2017թ. գիտական խորհրդի նիստի

ք.Երևան

9 մարտի 2017թ.

Ներկա էին՝ գիտխորհրդի 20 անդամներից 19-ը (ներկայաթերթիկը կցված է):
Նախագահ՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ք.գ.դ., պրոֆ. Ա.Սաղյան
Գիտական քարտուղար՝ ք.գ.թ. Ա. Դադայան

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի կանոնադրության հաստատում:
(զեկուցող՝ Ա.Սաղյան)
2. Ընթացիկ հարցեր:

ՔՆՆԱՐԿԵՑԻՆ և ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. ԵՂՉ Ֆարմացիայի ինստիտուտի կանոնադրության հաստատում:

Լսեցին՝ ԵՂՉ Ֆարմացիայի ինստիտուտի տնօրենի պաշտոնակատար ակադեմիկոս

Ա. Սաղյանին, ով ողջունեց ներկաներին նորաստեղծ Ֆարմացիայի ինստիտուտի գիտխորհրդի առաջին նիստի անցկացման կապակցությամբ և ներկայացրեց գիտխորհրդի հաստատված կազմը: Ա. Սաղյանը գիտխորհրդի անդամներին ներկայացրեց Ֆարմացիայի ինստիտուտի կանոնադրության նախագիծը, որը կազմվել է ԵՂՉ Դեղագիտության և քիմիայի ֆակուլտետի օրինակելի կանոնադրության հիման վրա: Մասնավորապես նշեց, որ կանոնադրության մեջ կատարվել են հետևյալ հիմնական փոփոխությունները՝

• ԵՂՉ Ֆարմացիայի ինստիտուտն իրականացնում է.

- Բարձրագույն մասնագիտական և հետբուհական կրթություն մի քանի մասնագիտություններով՝ ֆարմացիա, (դեղագիտություն), դեղաբանություն, դեղագործական քիմիա և այլն:
- Գիտահետազոտական գործունեություն ֆարմացիայի բնագավառում, մասնավորապես՝ սինթետիկ (քիմիական և կենսատեխնոլոգիական) և բուսական ծագման դեղապատրաստուկների ստացման մեթոդների/տեխնոլոգիաների մշակման, դեղանյութերի որակի հսկման և սերտիֆիկացման, բժշկակենսաբանական սկրինինգի, ֆարմացիայի էկոնոմիկայի ու կառավարման և այլ ուղղություններով:
- Ձեռնարկատիրական գործունեություն ֆարմացիայի բնագավառում, մասնավորապես՝ իր կողմից մշակված տեխնոլոգիաների ներդրման և արտադրանքի/տեխնոլոգիաների ապրանքայնացման ուղղությամբ:

Ա. Սաղյանը տեղեկացրեց նաև, որ ըստ Ֆարմացիայի ինստիտուտի կանոնադրության տնօրենն ունի տեղակալներ՝ ուսումնական աշխատանքների և գիտական ու ներդրումային հարցերի գծով, որոնց տնօրենի ներկայացմամբ նշանակում է ռեկտորը: Ուսումնական հարցերի գծով տնօրենի տեղակալը իրականացնում է ինստիտուտի կրթական գարծառայթների հետ կապված հարցերի համակարգման աշխատանքները:

Գիտական և ինովացիոն (ներդրումային) հարցերի գծով տնօրենի տեղակալը համակարգում է ինստիտուտի ստորաբաժանումների գիտահետազոտական, մշակումների ներդրման և արտադրանքի

ապրանքայնացման, պայմանագրերի, դրամաշնորհային ծրագրերի և այլ համագործակցությունների գործառույթները:

ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի գիտահետազոտական և ներդրումային գործառույթները իրականացնում է ինստիտուտի գիտահետազոտական բլոկը, որը ներառում է բազային գիտահետազոտական լաբորատորիաները, կենտրոնները և այլ իրավական կարգավիճակով հետազոտական խմբերը: Ընդ որում բազային լաբորատորիաների գիտաշխատողների ընտրությունն իրականացվում է մրցութային կարգով:

Ա. Սադյանը նշեց, որ կանոնադրության մնացած կետերում կատարվել են մասնակի փոփոխություններ:

Ելույթ ունեցան՝ Փոխտնօրեն ք.գ.թ. Ս. Վարդապետյանը, Կենսաբժշկագիտության ամբիոնի վարիչ բ.գ.դ. Ռ. Հովհաննեսյանը, բ.գ.դ., պրոֆեսոր Է. Սեկոյանը, ովքեր առաջարկեցին ընդունել ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի կանոնադրությունը և ներկայացնել հաստատման՝ ԵՊՀ գիտական խորհուրդ:

Որոշեցին՝ Քվեարկության արդյունքների հիման վրա (միաձայն) ընդունել ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի կանոնադրությունը և ներկայացնել հաստատման՝ ԵՊՀ գիտական խորհուրդ:

2. Ընթացիկ հարցեր:

Լսեցին՝

ա) Տեղեկություն ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի գիտական խորհրդին կից գործող տպագրման և արտոնագրման ներկայացվող աշխատանքների քննարկման և երաշխավորման հանձնաժողովի ստեղծման մասին:

Ելույթ ունեցավ՝ ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի տնօրենի պաշտոնակատար ակադեմիկոս Ա. Սադյանը, ով առաջարկեց գիտական խորհրդին կից ստեղծել տպագրման և արտոնագրման ներկայացվող աշխատանքների քննարկման և երաշխավորման հանձնաժողով:

Ելույթ ունեցան նաև գիտխորհրդի անդամներ կ.գ.թ. Ա. Հովհաննիսյանը, ք.գ.թ. Հ. Սիմոնյանը, ք.գ.թ. Կ. Պետրոսյանը, ովքեր ևս հավանություն տվեցին առաջարկին:

Առաջարկվեց.

ա) Տպագրման և արտոնագրման ներկայացվող աշխատանքների քննարկման և երաշխավորման հանձնաժողովի հետևյալ կազմը՝

Նախագահ՝ Բ.գ.դ. Ռ. Հովհաննեսյան
Անդամներ՝ Բ.գ.դ. Ի. Սեկոյան
Ք.գ.թ. Ա. Մկրտչյան:

բ) Տեղեկություն ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի մեթոդական խորհրդի նախագահի նշանակման մասին:

Ա. Սադյանը տեղեկացրեց այն մասին, որ համաձայն կանոնադրության ինստիտուտի ստորաբաժանումների ուսումնամեթոդական և գիտահետազոտական հարցերի քննարկման և գնահատման համար Ֆարմացիայի ինստիտուտում պետք է գործի մեթոդական խորհուրդ: Նա առաջարկեց Ք.գ.թ. Ս. Պետրոսյանի թեկնածությունը մեթոդական խորհրդի նախագահի պաշտոնում նշանակելու համար:

Ելույթ ունեցան՝

Փոխտնօրեններ՝ Ք.գ.թ. Ս. Վարդապետյանը, Ք.գ.թ. Ա. Մկրտչյանը, Կ.գ.թ. Ա. Հովհաննիսյանը, Ք.գ.թ. Ս. Շեյրանյանը, ովքեր Սաթենիկ Պետրոսյանին բնութագրեցին որպես պատասխանատու, բժախնդիր և բարեխիղճ անձնավորության և առաջարկեցին հավանություն տալ նրա թեկնածությանը:

Որոշեցին՝ (միաձայն)

ա) Հաստատել ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի տպագրման և արտոնագրման ներկայացվող աշխատանքների քննարկման և երաշխավորման հանձնաժողովի կազմը:

բ) Նշանակել Ս. Պետրոսյանին ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի մեթոդական խորհրդի նախագահ:

Գիտական խորհրդի նախագահ՝
տնօրենի պաշտոնակատար,
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ք.գ.դ, պրոֆ.

Ա. Սադյան

Գիտական խորհրդի քարտուղար՝ ք.գ.թ.

Ա. Դադայան